# Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ ՀՌՈՄԻ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՐՄՆԱԽՈՐՇԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԵՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ

2005 թ. հունվարի 19-ին տեղի ունեցավ Վատիկանի Սուրբ Պետրոս Մայր Տաճարի արտաքին որմնախորշերից մեկում տեղադրված Ս. Գրիգոր Լուսավորչի արձանի օրհնության արարողությունը՝ Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի նախագահությամբ:



Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փնօրհնությամբ, որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, այդ միջոցառմանն իր մասնակցությունը բերեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Մնսրով արքեպիսկոպոս Գրիգորյանը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաքելաշավիղ Հայրապետը, որ Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի մեծագույն սրբերից մեկն է, ընդունվում է նաև Կաթոլիկ և Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոնը Կաթոլիկ Եկեղեցում տոնվում է սեպտեմբերի 30-ին:

Արարողությանը մասնակցում էր նաև Հայ Կաթողիկե Ներսես Պետրոս ԺԹ Թարմունի Պատրիարքը, որի Աթոռը գտնվում է Լիբանանում: Վերջինս առաջնորդում է քրիստոնյա կաթոլիկ հայերի շուրջ 10 տոկոսին, որոնք ապրում են Սփյուռքում, և որոնք հաղորդության մեջ են Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու հետ:

Ս. Գրիգոր Լուսավորչի (ով հայտնի է նաև որպես Գրիգոր Հայ) արձանը քանդակել է լիբանանահայ քանդակագործ Խաչիկ Ղազանչյանը:

2001 թ. հոկտեմբերին Վատիկանը և Հայ Կաթողիկե Պատրիարքությունը կազմակերպեցին քանդակագործների միջազգային մրցույթ՝ որպես առաջադրանք ունենալով քանդակել Ս. Գրիգոր Լուսավորչի մարմարյա արձանը: 2002 թ. ապրիլին, հաղթող ճանաչվելով այդ մրցույթում, Խաչիկ Ղազանչյանը ձեռնամուխ եղավ այդ գործին: Արձանը, որ պատրաստված է Կարրարայի մարմարից, ունի 5.64 մ. բարձրություն և 18-տոննա կշիռ:

Ս. Գրիգորի աջ ձեռքում քանդակված է հայկական խաչ, իսկ ձախ ձեռքում՝ Ավետարան՝ զարդարված չորս Ավետարանիչների խորհրդանշաններով: Խույրի վրա պատկերված է Սուրբ Հոգու խորհրդանիշ հանդիսացող աղավնին, իսկ պանակեն ներկայացնում է

Նարեկի Տիրամոր և Մանուկ Հիսուսի պատկերը: Պատվանդանի վրա հայերենով և լատիներենով գրված է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, 301»:

Հունվարի 19-ից 21-ը Հռոմում տեղի ունեցավ նաև Ս. Գրիգոր Նարեկացուն նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպվել էր Հայ Կաթողիկե Պատրիարքության ջանքերով: Գիտաժողովին մասնակցեցին գիտնականներ Հայաստանից և Սփյուռքից, ինչպես նաև մի շարք արտասահմանյան հայագետներ: Գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Հայոց Եկեղեցին այս գիտաժողովում ներկայացնում էր Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը: Սրբազան Հայրը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
*Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակ*